



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան

05.09.2019թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-ԼՕ-2019/130**

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Մասնակից՝ «Դավիթ Քոչարյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-3» ծածկագրով գնանշման հարցում, տպագրման
աշխատանքներ:

Մասնակցությամբ՝
Մասնակից՝ «Դավիթ Քոչարյան» Ա/Ձ-ի տնօրեն՝ Դ. Քոչարյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության կողմից 06.08.2019թ. թիվ 26/26-1/13095-2019 գրությամբ «Դավիթ
Քոչարյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու
իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված
ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 02.08.2019թ. թիվ 18-2/43983-2019 գրության հիման վրա, 06.08.2019թ. «Դավիթ Քոչարյան» ԱԶ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 07.08.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 14.08.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 14.08.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.09.2019թ.-ին:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 02.08.2019թ. թիվ 18-2/43983-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պարվիրարու) և «Դավիթ Քոչարյան» ԱԶ -ի (այսուհետ՝ Կարարող) միջև 2019 թվականի մայիսի 27-ին կնքված թիվ ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-3 ծածկագրով «Պետության կարիքների համար տպագրական աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրի, (այսուհետ՝ Պայմանագիր) Կարարողը պարտավոր էր թիվ-1 հավելվածի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 2-րդ չափաբաբաժնով նախատեսված 50000 հատ 494500 ՀՀ դրամի «Թույլտվության հավաստագիր»-ը մինչև 2019 թվականի հունիսի 23-ը պատրաստել և մատակարարել Պարվիրարուին, սակայն Կարարողը նշված ժամկետում չի կատարել այդ աշխատանքները: Կարարողի կողմից ներկայացրած ձևանմուշը ենթարկվել է փորձաքննության, որը համաձայն ՀՀ արդարադատության նախարարության «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի սույն թվականի հուլիսի 30-ի թիվ 22321901 գրությամբ ներկայացված փորձագետի եզրակացության չի համապատասխանել Պայմանագրի թիվ-1

հավելվածի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված տեխնիկական բնութագրին: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2019 թվականի հուլիսի 3-ին թիվ /18-1/35135-2019 գրությամբ սահմանել էր ողջամիտ ժամկետ և նախազգուշացրել էր Կատարողին, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն, այլապես Պայմանագրից բխող պարասխանաարվության կիրառումը ընկերության նկատմամբ կլինեն անխուսափելի:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.3 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ստիպված է եղել 02.08.2019թ. միակողմանի մասնակի լուծել 2019 թվականի մայիսի 27-ին կնքված թիվ ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-3 ծածկագրով գնման պայմանագիրը՝ 494500 ՀՀ դրամ չկատարված աշխատանքների մասով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Դավիթ Քոչարյան» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. «Դավիթ Քոչարյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 09.08.2019թ. գրությամբ դիմել է «Դավիթ Քոչարյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.08.2019թ. թիվ 26/26-1/13095-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«Ներկայացնում եմ նկատառումներ 27.05.2019թ կնքված, «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-3» ծածկագրով պայմանագրի կատարման վերաբերյալ նախաձեռնված ընթացակարգի, Ձեր կողմից 09.08.2019թ ուղարկված ծանուցման.

- պայմանագրի տեխնիկական բնութագրում նշված չէ, որ խնդրո առարկա ձևաթղթերի վրա պետք է առկա լինեն ուլտրամանուշակագույն ճառագայթների ներքո ի հայտ եկող լուսարձակող մանրաթելեր և մանրադառ տպագրված տեքստեր: Նման պահանջները պարտադիր պետք է նշվեն գնման հրավերում, որպեսզի գնման մասնակիցն իմանա, արդյոք տվյալ պատվերն ի վիճակի է կատարել իր տեխնիկական

հնարավորություններով: Ընթացիկ տարվա ընթացքում գնումների armeps էլեկտրոնային համակարգում տեղադրվել են բազմաթիվ հրավերներ, որոնց տեխնիկական բնութագրերում առկա են վերոհիշյալ հատուկ պաշտպանության բաղադրիչները: Նշված հրավերներին մասնակցության հայտ չեն ներկայացրել, քանի որ նման պատվեր կատարելու տեխնիկական հնարավորության չունեն:

ՀՀ ՊԵԿ տրամադրած օրինակի և պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրի միջև առկա անհամապատասխանության մասին բազմիցս, նաև՝ գրավոր, ծանուցվել է ՀՀ ՊԵԿ գնումների պատասխանատուներին, հանձինս ՊԵԿ գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի: Սակայն պատվիրատուն շարունակել է պնդել, որ ձևաթուղթը պետք է տպագրվի ըստ իենց օրինակի, այլ ոչ թե պայմանագրի կատարման հիմք հանդիսացող տեխնիկական բնութագրի:

- ՊԵԿ գրավոր հաստատմանը ներկայացված նմուշները տպագրված են հատուկ գործարանային արտադրության՝ ջրանիշով թղթի վրա, ինչում կարող եք համոզվել, անզեն աչքով զննելով կից ներկայացված տպագրված նմուշը, ինչպես նաև նույն թուղթը՝ չտպագրված մաքուր վիճակում:

Ելնելով վերը գրվածից, առնվազն անհասկանլի է «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ կողմից ներկայացված փորձագետի եզրակացությունը, որտեղ, ըստ երևույթի, հարգարժան փորձագետը նույնացրել է «ջրանշան» և «ուպրամանուշակագույն ճառագայթների ներքո ի հայտ եկող լուսարձակող մանրաթելեր» հասկացությունները, մինչդեռ դրանք միանգամայն տարբեր բաներ են:

Կից ներկայացնում եմ.

- ՀՀ ՊԵԿ հաստատմանը ներկայացված ձևաթղթի նմուշը,
- տպագրության համար օգտագործված մաքուր թղթի նմուշը,
- «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇԶԲ-2019/2-3» պայմանագրի տեխնիկական բնութագրի պատճենը, պատվիրատուի օրինակի և տեխնիկական բնութագրի անհամապատասխանության մասին մեր գրությունների պատճենները,
- գնումների հրավերի պատճեններ, որտեղ գնման առարկայի տեխնիկական բնութագրերում պարզաճ ձևով նշված են են հատուկ պաշտպանվածության մասին պահանջները:»:

4. ՍՑ-ԼՕ-2019/130 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Դավիթ Քոչարյան» Ա/Ձ-ի միջև 27.05.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-3» ծածկագրով տպագրման աշխատանքների պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 2-րդ չափաբաժնի աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 (քսանհինգ) օրացուցային օր՝ մինչև 23.06.2019թ.-ը (Պայմանագիրը ուժի մեջ է մտել այս ստորագրելու օրը՝ 27.05.2019թ.-ին, համաձայն՝ Պայմանագրի 7.1 կետի):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի՝ 2-րդ չափաբաժնի աշխատանքների կատարման տեխնիկական բնութագրի համաձայն՝ «թույլտվության հավաստագիր»-ի թղթի տեսակը՝ ջրանիշով, խտությունը՝ առնվազն 100-120 գմ², տպագրությունը՝ 4+4, թղթի չափերը 297*420 մմ, A3, մեջտեղից ծալվող:

www.gnumner.am համացանցային կայքում 02.08.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Դավիթ Քոչարյան» Ա/Ձ-ի միջև 2019 թվականի մայիսի 27-ին կնքված թիվ ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-3 ծածկագրով «Պետության կարիքների համար տպագրական աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրի Կատարողը պարտավոր էր թիվ-1 հավելվածի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 2-րդ չափաբաժնով նախատեսված 50000 հատ 494500 ՀՀ դրամի «Թույլտվության հավաստագիր»-ը մինչև 2019 թվականի հունիսի 23-ը պատրաստել և մատակարարել Պատվիրատուին, սակայն Կատարողը նշված ժամկետում չի կատարել այդ աշխատանքները: Կատարողի կողմից ներկայացրած ձևանմուշը ենթարկվել է փորձաքննության, որը համաձայն ՀՀ արդարադատության նախարարության «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի սույն թվականի հուլիսի 30-ի թիվ 22321901 գրությամբ ներկայացված փորձագետի եզրակացության չի համապատասխանել Պայմանագրի թիվ-1 հավելվածի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված տեխնիկական բնութագրին: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2019

թվականի հուլիսի 3-ին թիվ /18-1/35135-2019 գրությամբ սահմանել էր ողջամիտ ժամկետ և նախազգուշացրել էր Կատարողին, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն, այլապես Պայմանագրից բխող պատասխանատվության կիրառումը ընկերության նկատմամբ կլինեն անխուսափելի:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.3 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ստիպված է միակողմանի մասնակի լուծել 2019 թվականի մայիսի 27-ին կնքված թիվ ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-3 ծածկագրով ծածկագրով գնման պայմանագիրը՝ 494500 ՀՀ դրամ չկատարված աշխատանքների մասով:

ՀՀ արդարադատության նախարարության «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի սույն թվականի հուլիսի 30-ի թիվ 22321901 գրությամբ ներկայացված փորձագետի եզրակացության համաձայն՝ փորձաքննությանը տրամադրված հետազոտելի թույլտվության հավաստագրերը չեն համապատասխանում ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեխնիկական բնութագրով սահմանված չափանիշներին (թղթի տեսակը՝ ջրանիշով, խտությունը՝ առնվազն 100-120գմ2, տպագրությունը՝ 4+4, թղթի չափերը 297*420 մմ, A3, մեջտեղից ծալվող), քանի որ դրանց թուղթը չունի ջրանիշ:

Փորձաքննությանը տրամադրված հետազոտելի թույլտվության հավաստագրերը տարբերվում են նաև ՀՀ ՊԵԿ-ի բնօրինակ նմուշ հանդիսացող թույլտվության հավաստագրից ուլտրամանուշակագույն ճառագայթների ներքո ի հայտ եկող լուսարձակող մանրաթելերի բացակայությամբ, ուլտրամանուշակագույն ճառագայթների ներքո ի հայտ եկող պաշտպանիչ հատկանիշների բացակայությամբ, ջրանիշի բացակայությամբ:

Միաժամանակ հարկ է նշել, որ նախաձեռնողի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի պահանջները չեն սահմանում որևէ էական պաշտպանական հատկանիշ, հետևաբար, դրանք «խոցելի» են և հեշտ վերարտադրվող:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.08.2019թ. թիվ 26/26-1/13095-2019 գրությամբ «Դավիթ Քոչարյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է

պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր)

անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք, Պատվիրատուն իրավունք ունի՝

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Դավիթ Քոչարյան» Ա/Ձ-ի միջև 27.05.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-3» ծածկագրով տպագրման աշխատանքների պետական գնման պայմանագրի հավելված 1-ով (այսուհետ նաև՝ Հավելված) սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 2-րդ չափաբաժնի ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 (քսանհինգ) օրացուցային օր՝ մինչև 23.06.2019թ.-ը (Պայմանագիրը ուժի մեջ է մտել այս ստորագրելու օրը՝ 27.05.2019թ.-ին, համաձայն՝ Պայմանագրի 7.1 կետի): Հավելվածով սահմանվել է նաև 2-րդ չափաբաժնի «թույլտվության հավաստագիր»-ի աշխատանքի կատարման տեխնիկական բնութագիրը, համաձայն որի՝ թղթի տեսակը՝ ջրանիշով, խտությունը՝ առնվազն 100-120 գմ², տպագրությունը՝ 4+4, թղթի չափերը 297*420 մմ, A3, մեջտեղից ծալվող:

www.gnumner.am համացանցային կայքում 02.08.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Դավիթ Քոչարյան» Ա/Ձ-ի միջև 2019 թվականի մայիսի 27-ին կնքված թիվ ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-3 ծածկագրով «Պետության կարիքների համար տպագրական աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրի Կատարողը պարտավոր էր թիվ-1 հավելվածի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 2-րդ չափաբաբաժնով նախատեսված 50000 հատ 494500 ՀՀ դրամի «Թույլտվության հավաստագիր»-ը մինչև 2019 թվականի հունիսի 23-ը պատրաստել և մատակարարել Պատվիրատուին, սակայն Կատարողը նշված ժամկետում չի կատարել այդ աշխատանքները: Կատարողի կողմից ներկայացրած ձևանմուշը ենթարկվել է փորձաքննության, որը համաձայն ՀՀ արդարադատության նախարարության «ՀՀ

փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի սույն թվականի հուլիսի 30-ի թիվ 22321901 գրությամբ ներկայացված փորձագետի եզրակացության չի համապատասխանել Պայմանագրի թիվ-1 հավելվածի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված տեխնիկական բնութագրին: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2019 թվականի հուլիսի 3-ին թիվ /18-1/35135-2019 գրությամբ սահմանել էր ողջամիտ ժամկետ և նախազգուշացրել էր Կատարովին, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն, այլապես Պայմանագրից բխող պատասխանատվության կիրառումը ընկերության նկատմամբ կլինեն անխուսափելի:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.3 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն միակողմանի մասնակի լուծել է 2019 թվականի մայիսի 27-ին կնքված թիվ ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-3 ծածկագրով ծածկագրով գնման պայմանագիրը՝ 494500 ՀՀ դրամ չկատարված աշխատանքների մասով:

ՀՀ արդարադատության նախարարության «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի սույն թվականի հուլիսի 30-ի թիվ 22321901 գրությամբ ներկայացված փորձագետի եզրակացության (այսուհետ՝ եզրակացություն) համաձայն՝ փորձաքննությանը տրամադրված հետազոտելի թույլտվության հավաստագրերը չեն համապատասխանում ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեխնիկական բնութագրով սահմանված չափանիշներին (թղթի տեսակը՝ ջրանիշով, խտությունը՝ առնվազն 100-120գմ², տպագրությունը՝ 4+4, թղթի չափերը 297*420 մմ, A3, մեջտեղից ծավլող), քանի որ դրանց թուղթը չունի ջրանիշ:

Փորձաքննությանը տրամադրված հետազոտելի թույլտվության հավաստագրերը տարբերվում են նաև ՀՀ ՊԵԿ-ի բնօրինակ նմուշ հանդիսացող թույլտվության հավաստագրից ուլտրամանուշակագույն ճառագայթների ներքո ի հայտ եկող լուսարձակող մանրաթելերի բացակայությամբ, ուլտրամանուշակագույն ճառագայթների ներքո ի հայտ եկող պաշտպանիչ հատկանիշների բացակայությամբ, ջրանիշի բացակայությամբ:

Միաժամանակ նշվել է, որ նախաձեռնողի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի պահանջները չեն սահմանում որևէ էական պաշտպանական հատկանիշ, հետևաբար, դրանք «խոցելի» են և հեշտ վերարտադրվող:

Սույն գործի փաստերի, մասնավորապես ՀՀ արդարադատության նախարարության «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի սույն թվականի հուլիսի 30-ի թիվ 22321901 գրությամբ ներկայացված փորձագետի եզրակացության հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պայմանագրի Մասնակցի վրա դրված պարտավորությունների խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի գործողությունների արդյունքում, վերջինս է

նպաստել պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի՝ 2-րդ չափաբաժնի աշխատանքների կատարման տեխնիկական բնութագրի համաձայն սահմանվել է «թույլտվության հավաստագիր»-ի թղթի տեսակը՝ ջրանիշով, խտությունը՝ առնվազն 100-120 գմ2, տպագրությունը՝ 4+4, թղթի չափերը 297*420 մմ, A3, մեջտեղից ծավլող:

Եզրակացության համաձայն՝ փորձաքննությանը տրամադրված հետազոտելի թույլտվության հավաստագրերը տարբերվել են ՀՀ ՊԵԿ-ի բնօրինակ նմուշ հանդիսացող թույլտվության հավաստագրից ուլտրամանուշակագույն ճառագայթների ներքո ի հայտ եկող լուսարձակող մանրաթելերի բացակայությամբ, ուլտրամանուշակագույն ճառագայթների ներքո ի հայտ եկող պաշտպանիչ հատկանիշների բացակայությամբ, ջրանիշի բացակայությամբ:

Միաժամանակ նույն Եզրակացությամբ նշվել է, որ նախաձեռնողի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի պահանջները չեն սահմանում որևէ էական պաշտպանական հատկանիշ, հետևաբար, դրանք «խոցելի» են և հեշտ վերարտադրվող:

Պատվիրատուն, պահանջելով Մասնակցից կատարել այնպիսի աշխատանք, որը նախատեսված չէ Հավելվածով 2-րդ չափաբաժնի «թույլտվության հավաստագիր»-ը աշխատանքի կատարման տեխնիկական բնութագրով, հանգեցրել է Մասնակցի կողմից ստանձնած Պայմանագրային պարտավորությունների խախտմանը, դրանց ոչ պատշաճ կատարմանը՝ էականորեն խախտելով թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-3» ծածկագրով տպագրման աշխատանքների պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը, հարկ է համարում նշել, որ թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-3» ծածկագրով տպագրման աշխատանքների պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված մյուս՝ 1-ին, 24-րդ և 25-րդ չափաբաժիններով նախատեսված աշխատանքները կատարվել են պատշաճ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Դավիթ Քոչարյան» Ա/Ձ-ի կողմից ձեռնարկվել են հնարավոր

բոլոր գործողություններն՝ ուղղված գնումների գործընթացին ստանձնած պարտավորությունների կատարմանը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել տրամաբանական ավարտին:

Ուստի, նման պայմաններում, Մասնակցի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, և որպես հետևանք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.08.2019թ. թիվ 26/26-1/13095-2019 գրությամբ «Դավիթ Քոչարյան» Ա/Զ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ